№ 23 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27 **1892** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27 № 23

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՆԵՐԿԱՅ **1892** ԹԻԱԿԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 20-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., մի ամսվանը՝ 1 բուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն՝ լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 բուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 բուբլի:

(№ 127) Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ВЫСОЧАЙШЕ разрѣшенный 12 Декабря 1891 г. второй и послѣдній выпускъ билетовъ Благотворительной Лотереи въ пользу нуждающагося населенія въ мѣстностяхъ, пострадавшихъ отъ неурожая 1891 года.

Второй выпускъ билетовъ Благотворительной Лотереи будетъ произведенъ на сумму 6.000.000 руб. на точномъ основаніи правилъ, содержащихся въ ВЫСОЧАЙШЕ одобренномъ 18 Ноября 1891 г. положеніи о Благотворительной Лотереѣ.

О срокѣ, когда будетъ произведенъ тиражъ выигрышей, будетъ объявлено въ свое время.

Продажа билетовъ и отдѣльныхъ купоновъ будетъ производиться: въ Государственномъ Банкѣ, его конторахъ и отдѣленіяхъ, въ отдѣленіяхъ Сберегательной Кассы Банка въ С.-Петербургѣ и Москвѣ, въ уѣздныхъ казначействахъ, въ учрежденіяхъ Почтово-Телеграфнаго вѣдомства и Краснаго Креста, въ кассахъ станцій желѣзныхъ дорогъ, въ частныхъ банкахъ и банкирскихъ конторахъ и проч.

О днѣ открытія продажи билетовъ въ каждомъ городѣ будетъ объявлено отдѣльно, вмѣстѣ съ перечисленіемъ тѣхъ мѣстъ, въ коихъ продажа сія будетъ производиться.

(№ 19) 3—4 (չ. Ե.)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Հ. Յ. ՕՐԲԷԼԻ

Սօլոլակայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:

(№ 145) 24—150

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մարդասիրական ընկերութեան ընդհանուր ժողովի շարունակութիւնը: Նամակ Աբասթումանից. Նամակ Նոր-Բայազէտից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եէնի-Գարուի հրդեհը. Բերլինի անկարգութիւնները. Պարսկաստան. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. —ՏԵՂԵԿԱՑՈՅՑ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. կենդանագիրներ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Թէև նախընթաց ժողովում ասվեց, թէ շարունակութիւնը կը լինի ամսիս 25-ին, բայց կայացաւ 22-ին, հէնց այս պատճառով էլ բացակայ էր ընդհանուր ժողովի քարտուղարը. բացակայ էին նոյնպէս և ուրիշ անդամներ:

Ժողովի համար ուրիշ քարտուղար ընտրելուց յետոյ՝ կարդացվեց նախընթաց ժողովի արձանագրութիւնը, որը քանի մի փոփոխութիւններով ընդունվեց:

Այս անգամ ժողովը բացառապէս պիտի զբաղվէր յետագայ երկամեկի համար անդամներ ընտրելով. յայտարարված էր այդպէս. բացի լրագրական յայտարարութիւնից, նոյն իսկ «Հրաւիրագիրների» մէջ խորհրդածութեան առարկաների շարքում ասված է. «ընտրել երկու տարի ժամանակով մի նախագահ, մի դանձապահ, մի ատենադպիր, մի հաշւապահ և հինգ անդամ խորհրդի ընկերութեան գործերը կառավարելու համար:»

Այս բոլորից յետոյ՝ ի մեծ զարմանք ժողովականների, ոչ մի ընտրութիւն տեղի չունեցաւ... յայտարարվեց՝ թէ ամենքն էլ մնում են բացի երկուսից, որոնց համար նախագահը խոստացաւ համոզելու, որ նրանք ևս շարունակեն մնալ մինչև եռամեակի լրանալը: Թէ այս ինչ խաղ էր, որ խորհուրդը թոյլ տուեց իրան խաղալու ընդհանուր ժողովի դէմին — սա մի հանելուկ է, որը լուծել կարող է միմիայն ինքը խորհուրդը...

Ընդհանուր ժողովի մեծամասնութեան տրամադրութիւնն էր նոր ընտրութիւն անել՝ վերընտրել խորհրդի նախագահ վ. Դօլուխանեանցին և դանձապահ պ. Մ. Աբիեանցին, ապա նոր անդամներ մտցնել, անդամներ, որոնք, եթէ ոչ աւելի, գոնէ համահաւասար ջանքերով, գործակից լինէին պ. Դօլուխանեանցին, ինչպէս շինութեան համար փող ժողովելում, այնպէս էլ ընկերութեան նպատակին գիտակցաբար ծառայելում:

Մի տարվայ փորձը չօչափելի կերպով ապացուցեց, որ պ. Դօլուխանեանց անտարբեր չէ դէպի իր պաշտօնը, որ նա գիտակցաբար է վերաբերվում դէպի գործը, որ կամենում է իսկապէս ծառայութիւն արած լինել:

Անցեալ տարվայ ընթացքում շինութեան համար ժողոված 16,000 ր. գլխաւորապէս նրա ջանքերով է եղած. իբրև համակրանք վայելող մի մարդ և մի և նոյն ժամանակ փաստաբան, նա քաջ գիտէ ամեն մէկին, գիտէ թէ որտեղից կարելի է օգտվել, ում կարելի է պարտաւորեցնել, որին հարկադրել և այլն:

Նոյն իսկ ընդհանուր ժողովի ժամանակ ակնյայտ կերպով երևաց, որ պարոնը իր փաստաբանական ասպարիզում ևս չէ մոռանում ուսումնարանի շինութեան պակասութիւնը, ընկերութեան գործերը: Եղբ. Կրասիլնիկեանների ընտանեկան-մասնաւոր գործերի վերաբերեալ պ. Դօլուխանեանց, իբրև փաստաբան հրաւիրվելով՝ մատուցանում է իր ծառայութիւնը՝ հարկադրելով նրանց 10,000 բուբլի նուիրել «Մարդասիրական ընկերութեան». թէև դեռ չէ ստացված գումարը, բայց նրանցից ստացված է ձեռագիր՝ իրանց խոստումներն անպայման կատարելու համար: Առանց որ և է երկբայութեան, հաւատացած պէտք է լինել, որ պ. Դօլուխանեանց եթէ այս կերպ շարունակելու լինի, մինչև երկու տարի շինութիւնը բոլորովին կաւարտվի. ահա հէնց այս ակներև հաւատն էր, որ թելադրում էր ժողովականների մեծամասնութեան վերընտրած տեսնել կրկին պ. Դօլուխանեանցին նախագահի պաշտօնի մէջ:

Ընտրութիւն տեղի չունենալով՝ ժողովը զբաղվեց այդ երեկոյեան մի քանի երկրորդական խնդիրներով միայն:—Նախագահ պ. Թամայեանց յայտնեց Լենքօրանի հասարակութեան կողմից ուղղած խնդիրը, որով խորհրդից խնդրում են, որ Մարդասիրական ընկերութիւնը նրանց ուսումնարանապատկան 4000 բուբլին ընդունէ չահեցնելու՝ տալով նրանց ուսումնարանի այդ գումարի տարեկան %-ը միայն:

Մի քանի հանդամանքներ աչքի առաջ ունենալով, ժողովը համամիտ եղաւ խորհրդի հետ, որոշվեց ընդունել այդ գումարը, համարելով այդ մի տեսակ օժանդակութիւն վերոյիշեալ ուսումնարանին:

Այս որոշումից յետոյ կարդացվեց պ. Աւետիս Ղուկասեանցի խորհրդին ուղղած նամակը: Պ. Ղուկասեանց խոստացել է 10,000 ր. նուիրել ուսումնարանի շինութեան՝ դահլիճը աւարտելու, պակասութիւնները լրացնելու, զարդարելու համար այն պայմանով միայն, որ ընկերութիւնը ապագայում դահլիճից ստացած արդիւնքի մի մասով պահի նրա անունով մշտական մի որդեգիր Գէորգեան ճեմարանում, իսկ միւս մասը յատկացնի Բագուի երկսեռ դպրոցներին.—բացի սրանից նաև դահլիճի և նրան կից սենեակների ճակատներին ոսկեզօծ տառերով արձանագրել, թէ դահլիճը և այդ սենեակները շինվել են իր՝ Աւետիս Ղուկասեանցի ծախսերով...

Այս առաջարկութեան առիթով զանազան առարկութիւններից յետոյ՝ ձեւակերպեցին այսպէս. «ընդունել նրանից 10,000 ր. և պահել մշտապէս մի որդեգիր նրա անունով, և եթէ անպատճառ ցանկանում է իր անունը արձանագրած տեսնել դահլիճում, արձանագրել միայն այսպէս՝ թէ այս դահլիճի վրա ծախսած 10,000 ր. միահամուռ նուիրել է պ. Աւետիս Ղուկասեանց...

Նախ քան ժողովի փակելը՝ Գեղամեան քահանան իրան յատուկ ճարտարութեամբ մի շարք դիտողութիւններ անելով թղթակցութիւնների վերաբերեալ, նպատակայարմար դատեց, որ խորհուրդը իր արձանագրութիւնների վրա յենված՝ ինքը այս կամ այն կերպով տեղեկութիւններ հաղորդէ մամուլին, որպէս զի նոյնը արած չը լինեն ուրիշները, թերևս սխալ և թերի կերպով:

Թէ ինչ էր ուզում ասել տէր հայրը իր առաջարկութեամբ, այդ ինքը գիտէ, գոնէ մեզ անյայտ մնաց: Առաջարկութիւնը մնաց անհետևանք:

Սրանով վերջացաւ ժողովը. ժողովականները առանց կարդացնել տալու արձանագրութիւնը, ստորագրեցին և դուրս գնացին:

***

ՆԱՄԱԿ ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻՑ

Փետրվարի 21-ին

Երբ առիթ ենք ունեցած նկարագրելու Ախալցխայի տնտեսական վիճակը, միշտ ստիպված ենք եղել կրկնելու «աննախանձելի» բառը: Եւ ճշմարիտ. վերջին ռուս-տաճկական պատերազմից զկնի կարծես Ախալցխայի աստղը օրից օր խաւարում է: Դառն չքաւորութիւնը և աղքատութիւնը տարածում է իր սգաւոր թեները, աստիճանաբար զգուելով իր սոսկալի ճիրանների տակ հարիւրաւոր գերդաստաններ: Ցուսահատութեան մատնված հասարակութիւնը թուլանում է և խորտակվում, առանց իր տոկուն ճիգը թափելու՝ մաքառել և դիմադրել կեանքի գոյութեան պատերազմում: Ես անցեալ տարվայ նամակներիցս մինում նկատել էի և կրկին նկատում եմ, որ ախալցխացիք կարող են բարւոքել իրանց նիւթական դրութիւնը, կատարելագործելով իրանց արհեստները. նրանք այդպիսով կը կարողանան մոռացել, իրանց արհեստի արտադրութիւնները վաճառահանելով օտար երկիրներ, և կամ օգտվելով երկրի աշխարհագրական և կլիմայական պայմաններից, աստիճանաբար զարգացնեն իրանց մէջ գիւղատնտեսական մի քանի ճիւղեր, ինչպէս են պարտիզպանութիւն, բանջարանոցապահութիւն, չերամապահութիւն և մեղուապահութիւն: Երկրի բնական հարուստ արգասաւորութիւնը և կլիման այնքան նպաստաւոր են և արդէն փորձված, որ մեր վերև յիշված գիւղատնտեսական պարապմունքները կարող են չափաւորապէս վարձատրել. իսկ անտառային մասերում նպատակայարմար է զարգացնել փայտագործութիւնը, որի պահանջն այնքան ընդարձակ է թէ մեր նահանգի մի քանի քաղաքներում և թէ մինչև անգամ Ալեքսանդրոպոլ և աւելի հեռուն: Թէպէտ մեր արծարծած սկզբունքը չը մնաց «ձայն բարբառոյ յանապատի» և մի քանիսները ձեռնարկեցին պարտիզպանութեամբ և բանջարանոցապահութեամբ զբաղվելու, մինչև անգամ փորձեցին և չերամապահութիւն, սակայն չը շարժեց ընդհանուր հետաքրքրութիւն և խուլ մնաց հասարակութեան մեծամասնութեան մօտ: Ամբոխի հետաքրքրութիւնը շարժելու համար հարկաւոր է ուժեղ ձայն և համոզեցուցիչ գործնական փաստեր, որպիսիները կարող են ապացուցանել մեր քաղաքում օրինակելի պարտիզպաններ պ.պ. Յարութիւն Ազնաւուրեանց և մասնագէտ գիւղատնտես Արշակ Ճարակեան. իսկ արհեստաւոր դասակարգից կան մի քանիսներ, որոնք իրանց խելացի հետևողութեամբ և ճարպիկութեամբ կարողացել են արհեստի ցենը բարձրացնել: Թէ առաջինները և թէ վերջիններից մի քանիսը ընդունակ են մինչև անգամ ժողովրդական դասախօսութիւններ կարդալու յիշեալ ճիւղերի վերաբերութեամբ: Որոնք բարեկամ են ժողովրդի բարօրութեան յուսամ անուշադիր թողնելու չեն մեր այս առաջարկը, ինքնաբերաբար ճանաչելով նրա օգտակար կողմերը: Բայց առհասարակ հայի յատկանիշն է, մի փոքրիկ դժբաղդութեան միջոցին յուսահատվել և թուլանալ, փոխանակ տոկունութեան և նոր ջանքերի: Կարօտութեան վերջին վայրկենին մին էլ տեսնես հայն առնում է պանդխտութեան ցուպը և թափառում քաղաքից քաղաք բաղդ որոնելու, անտէր և անօգնական թողնելով իր ընտանիքը և զաւակները. բայց թէ պանդխտութեան միջոցին որքան է աջողվում նրանց և որքան կարող են բարւոքել իրանց նիւթական վիճակը, այդ չեմ կարող ճշդել թուաբանական հաշւով, սակայն և շատերը կորչում են և անհետանում, կամ չարքաշ կեանքի հետևանք վաղահաս մահը խլելով նրանց կեանքի թելը, իսպառ զրկում են իրանց ընտանիքը միակ ապաւէնից և տան ճրագից: Ախալցխացի պանդուխտ հայերը ցրված են ամեն տեղ, բայց մեծամասնութիւնը փոքրիկ կօլոնիաներ է հաստատել Ազզորում, Բօրժոմում, Արդահանում, Օլտիում և Աբասթումանում:

Մի քանի խօսք Աբասթումանում վերաբնակված հայերի վերաբերութեամբ։ Աբասթումանում այժմ հաստատված են մօտաւորապէս երեսուն դերդաստաններ, որոնցից ոմանք պահապաններ են ամարանոցների, մի մասը առևտրական դասակարգի մարդիկ և կապալառուներ, կան և արհեստաւորներ, սակայն պալատի շինութեան առթիւ այստեղ հաւաքված են բացի ռուս մուժիկներից, մեծ մասամբ և հայեր թէ Ախալցխայից և թէ օտար քաղաքներից՝ հիւսն, որմնադիր, մչակ, սայլապան և այլն. մօտաւորապէս այժմ բնակվում են Աբասթումանում աւելի քան երեք հարիւր հայեր։ Այս փոքրիկ գաղթականութիւնը չունի ոչ եկեղեցի, ոչ քահանայ, ոչ դպրոց. խպառ զրկված կրօնական մխիթարութիւնից, այս մեծ պասի միջոցին նրա ականջին չեն մրմնջում ապաշխարութեան և մխիթարութեան ոգելից աղօթքներ։ Մահվան և ծնունդի ժամանակ միայն հրաւիրում են Ախալցխայից քահանայ, որը մէկին թաղելով, միւսին մկրտելով, կրօնական արարողութիւնը կատարելուց զկնի անմիջապէս մեկնում է Աբասթումանից. իսկ երկսեռ մանուկները, որոնց հարկաւոր է ուսումն և կրթութիւն, ամայի ծառերի նման աճում են, զուրկ մնալով զէթ տարրական կրթութեան բարերար աղդեցութիւնից. մենք դեռ ևս չենք յիշում այն բաղմութեան հոսանքը, որը հաւաքվում է այստեղ ամառնային սեզոնի ժամանակ։ Որքան լսեցինք հաստատ աղբիւրներից, մի քանի տարիներից առաջ ընտրված կար մի յանձնաժողով աղդեցիկ և հեղինակաւոր անձերից (պ.պ. Փրիդոնեան, բժիշկ Բաբայեան, Իւզբաշեան և տեղիս ոստիկանապետ Հաղարապետեան), որոնք ստանձնել են իրանց վրա բարոյական պարտականութիւն գլուխ բերելու եկեղեցի կառուցանելու միտքը։ Հանդանակված է մօտաւորապէս մի հազար բուբլի, որը կարծեմ պահվում է կօնսիստորիայում. խոստացել են և շատերը այստեղի հարուստ հայ ամարանոցատէրերից նպաստել դրամով, երբ հիմք ձգվի եկեղեցու շինութեանը։ Սակայն յիշեալ յանձնաժողովը վարանում է գործ սկսել, որովհետև կառավարութիւնից նշանակված եկեղեցու տեղը յարմարաւոր չէ գտնում, հեռու լինելով կենտրօնից։ Մի և նոյն ժամանակ բոլորովին արդարացի է տեղական ժողովրդի տրտունջը,—թէ մինչև երբ մենք պէտք է սպասենք ունենալ եկեղեցի։ Սակայն և մեծ յոյս է տածում վերոյիշեալ յանձնաժողովի վրա, թէ անշուշտ, յանձնաժողովը այս տարի պիտի լուծէ այս կենսական հարցը։

Խաղաղ և հանդարտ էր Աբասթումանի բարեկենդանը. մեծ քաղաքների աղմուկը և խեղկատակութիւնները երազական էին Աբասթումանի համար։ Ընդհանրապէս օրինակելի են այստեղ կարգապահութիւնը, առողջապահական պայմանները և մաքրութիւնը, որոնց համար փոքր ջանք չէ դնում տեղիս ոստիկանութեան ներկայացուցիչ պ. Հաղարապետեան։

Ր.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ

—

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ

—

Նա յայտնվում է հայութեան որպէս Վասպուրականի մի համեստ վանքի համեստ վանահայր։ Համեստ իր սովորութիւններով, բարք ու վարքով, նիստ ու կացով, մարդկանց հետ պարզ վարմունքով,—բայց անասելի յանդուգն, որպէս դաղափարի համար մարտնչող, որպէս մոլեռանդ պաշտող մարդկային մտքի... Երջանիկ մարդ. նա անկեղծ կերպով հաւատում է մտքի փրկարար, անյաղթելի աղդեցութեանը, անպայման հաւատում է խօսքի ոյժին...

Համեստ վանահայրը գրում է փիլիսոփայական-կրօնական գրքեր, գրում է ոգևորված բանաստեղծութիւններ, հիմնում է վանքում մի տպարան, սկսում է հրատարակել իր վանքում մի լրագիր, հիմնում է մի դպրոց։ «Արծիւ Վասպուրականի» լրագիրը լինում է Հայաստանի խորքերում հրատարակվող առաջին լրագիրը,—և նրա դադարումից յետոյ այլ ևս երբէք ոչ ոքին չէ աջողվում Հայաստանի խորքերում ձեռնարկել այդ տեսակ համարձակ գործին։

Քարոզ խօսելիս, նա հաւատում է, անկեղծ կերպով հաւատում է թէ իր խօսքն աղդում է, թէ իր խօսքը կարող է յեղափոխել հայութիւնը, որովհետև նա ինքն հաւատում է խօսքի անյաղթելի ոյժին, հաւատում է ճշմարտութեանը, հաւատում է թէ արդարութիւնը վերջ ի վերջոյ յաղթող կը հանդիսանայ։

Եւ նա իսկապէս չէ սխալվում. այ՛ո, վերջ ի վերջոյ միտքը, խօսքը՝ աշխարհը կը նուաճեն,—սակայն ԵՐԸ... դա ժամանակի հարց է։ Գուցէ մարդու կեանքը կանցնէ, և նա չի տեսնի իր աղնիւ մաքառման պտուղները, բայց անուրանալի է, որ յաղթելու համար պէտք է մոլեռանդ լինել, պէտք է համոզված լինել, պէտք է իդեապաշտ լինել մինչև ֆանատիկոսութիւն...

Եւ Խրիմեան մնում է ֆանատիկոս, դաղափարամոլ իր ամբողջ կեանքի ընթացքում, մինչև իր եօթանասուն և երկու տարեկան հասակը։

Միայն այդ տեսակ համոզվածները կարող են ժողովրդական մարդիկ լինել. դրա մէջն է Խրիմեանի ժողովրդական մարդ լինելու դաղտնիքը։

Այդ անսահման, այդ կոյր հաւատը դէպի մտքի ոյժը, դէպի խօսքի դիւթական, ամեն բան յեղափոխող ազդեցութիւնը՝ Խրիմեան պահպանում է իր կեանքի ամբողջ ընթացքում, իր հետ է տանում և Կ. Պոլիս և ապա Բերլին...

Սէր դէպի մարդկութիւն, ուրեմն և սէր դէպի իր ազգը, հաւատ դէպի արդար մտքի ոյժը, հաւատ դէպի համոզված խօսքի անյաղթելի լինելը,—ահա այդ ժողովրդական մարդու նշանաբանը։ Ուսում, քաղաքակրթութիւն, քարոզ, տպագրական խօսք, քրիստոնէական սէր, համբերողութեան լայն ոգին,—ամեն բան կարող են յաղթել... Եւ նա չէ սխալվում. այո՛, մի ժամանակ այդ բոլորը յաղթող կը հանդիսանայ խաւարի, կեղծաւորութեան, տգիտութեան, սուտի վրա։

—

Կ. Պոլսի պատրիարք դառնալով, Խրիմեան մնում է նոյն պարզ, համեստ աբեղայ, ինչ որ էր Վասպուրականի վանքի վանահայր եղած ժամանակ։ Նա մատչելի է ամենքին, նա ինքն լաց է լինում, երբ արտասուք է նկատում իր խօսակցի, մի որ և է թշուառ պանդուխտի աչքերում։ Խրիմեան օպտիմիստ է, լաւատես է այդ բառի բուն քրիստոնէական մտքով. նրա համար չը կան վատ մարդիկ աշխարհիս երեսին. այլ կան միայն մոլորված մարդիկ։ Նա երբէք չէ հաւատում, որ գիւղացին կարող է նենգաւոր լինել, որ ինտելիգենտ մարդը կարող է խարդախ լինել։ Նա միշտ անյիշաչար է. իրան անձնապէս վատութիւն ա[illegible]ած մարդուն նա անմիջապէս ներում է և ան[illegible]կեղծ կերպով հաւատում է, որ մարդն ուղղվի[illegible] է, երբ ներողութիւն է խնդրում...

Որքան նա պարզ, ներող ու զիջանող է մարդ[illegible]կանց հետ մասնաւոր յարաբերութիւններում, այն[illegible]քան նա յամառ է իր մտքերի, իր դաղափարների[illegible] իր դաւանած սկզբունքների մէջ։ Նա մաղի չա[illegible] չի չեղվի իր համոզմունքներից։ Նոյն տոկուն[illegible] անյաղթելի յամառութեամբ շարունակում է նա[illegible]մարտնչել և Կ. Պոլսի պատրիարք եղած ժամանա[illegible] որ և է անարդար պահանջների դէմ. մի քարե[illegible]սիւն, որին ոչ հողմը, ոչ էլ մրրիկը չեն կարող[illegible] շարժել իր ամուր պատուանդանից։

Մանուկ և հսկայ, հեղ և վիթխարի,—ա[illegible] Խրիմեանի պատկերը։

—

Նախարարութեան, Կրօնական կամ Ազգայ[illegible] ժողովում արդարութեան անունով մղված ա[illegible]ղորմ կռիւից, յամառ մաքառումից յետոյ՝ նա [illegible]տան մէջ շրջապատում է իրան օգնութեան կ[illegible]ըստ ամեն տեսակ հայերով. ինչ կրօնի, [illegible] դաւանութեան են պատկանում այդ հայերը,[illegible] Խրիմեանի համար փոյթ չէ. բաւական է, որ նրանք հայեր են և ինքն հաւատում է, որ նրանք ամենքն անկեղծ կերպով սիրում են հայութիւնը[illegible]

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ

—

Փետրվարի 10-ին

Վաղուց ի վեր Նոր-Բայազէտից հեռու ապրելով, կրկին, հանդամանքների պատճառով, մուտք գործեցի Նոր-Բայազէտ։ Ես այնպէս էի կարծում, որ այս մի քանի տարվայ ընթացքում քաղաքիս բնակիչները իրանց առաջվայ չռայլ ծախսերից ձեռք վերցրած կը լինէին, բայց զարմանալով տեսայ, որ այդ չռայլ ծախսերը կրկնապատկվել են այստեղ։ Մի բան էլ նորից արմատ է դրել Նոր-բայազէտցիների մէջ. այս մի քանի տարվայ մէջ գողութիւն, թալանութիւն, մարդասպանութիւն օր ցերեկով են կատարվում....

Իսկ գալով Նոր-բայազէտցիների այժմեան նիստ ու կացին, կամենում եմ մի քանի համառօտ տեղեկութիւններ տալ։ Սրանից մի քանի տարի առաջ դիցուք մի երիտասարդ նշանվում էր. նշանադրութեանը անպատճառ պէտք է մի 15 կամ 20 հատ թիւրքաց ոսկիներ տանէր, որոնց հատը արժէր 1 ր. 60 կ.։ Մի քանի ժամանակից յետոյ վերոյիշեալ ոսկիների ընծայելուն վերջ դրին և մի այլ մօդա մտցրին. փոքր առ փոքր սկսեցին աւելի մեծ գումարներ ընծայել նշանադրութեան ժամանակ. այժմ ամեն մի երիտասարդ նշանվելիս պարտաւորված պէտք է 20 կամ 22 բուբլի արժեցող ոսկուց 10 կամ 15 հատ տանի նշանադրութեանը։ Այդ աւելորդ և չռայլ ծախսերը բոլորն էլ բարձր դասակարգիցն են առաջ գալիս. բարձր դասակարգը ինչ որ անում է, մի և նոյնն է ուզում անել աւելի աղքատ դասակարգը, և այդպիսով էլ չափից դուրս չռայլ ծախսեր անելով հասարակ դասակարգը, ճնշվում է վաշխառուի ձեռքի տակ։ Հարսանիքի ժամանակ սովորութիւն կայ, որ կանանց և օրիորդներին մրգեղէններով և քաղցրեղէններով են հիւրասիրում. այդ բաւական չէ. պէտք է այդ քաղցրեղէններից այնքան լինի, որ հիւրերից ամեն մէկը կարողանայ իր բաժինը տուն տանել։ Դիցուք մի տանից մայրը իր երեք կամ չորս աղջիկներով է գտնվում մի հարսանիքում. հասատ կարելի է ասել, որ յիշեալ մայրն իր աղջիկներով տասը ֆունտից աւելի միրգ և կոնֆետներ է տանում իր տունը։ Հարցնող լինի. միթէ դրա մէջն է կայանում լուսաւորութիւնը։

Կան այնպիսի երիտասարդներ, որոնք ամուսնանալու ժամանակ այնպիսի չռայլ ծախսեր են անում, որ դրա համար ստիպված են լինում իրանց տան ունեցած մի զոյդ եղը ծախել և դուցէ վաշխառուին էլ մի քանի տասնեակ բուբլի փող վեր առնել... Արդեօք չէ՞ կարելի, որ այս մի քանի աւելորդ ծախսերից ձեռք վերցնէին և իւրաքանչիւր մարդ իր կարողութեան չափ ծախսեր անէր և ուշադրութիւն չը դարձնէր ուրիշների բամբասանքներին։ Շռայլ ծախսեր անելը թէ հարսանիքներում և թէ թաղման ժամանակ՝ դարձել է աւանդական սովորութիւն, որը բռնի կերպով ճնշում է հասարակաց բարք ու վարքի վրա։

Ցեղացի

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, փետրվարի 26-ին Նորին Մեծութեան Թագաւոր Կայսրի ծննդեան տօնի օրը լինելով, ամբողջ ԹԻՖԼԻՍԸ զարդարված էր դրօշակներով։ Բոլոր դաւանութիւնների մայր-տաճարներում և եկեղեցիներում գոհացողական մաղթանքներ կատարվեցան։ Երեկոյեան քաղաքը լուսաւորված էր։

—

Յունվարի 6-ի աղետից ՀԼԱՍՎԱԾՆԵՐԻ օգտին հետևեալ անձինք ուղարկել են մեզ հետևեալ գումարները. մի թիֆլիսաբնակ տիկին 3 բուբլի, Շուլավերից՝ Պողոս քահանայ Խաչակեանց, գիւղի ուսումնարանի աշակերտների և աշակերտուհիների կողմից նուիրած 10 բուբլի, Երևանից՝ լուսանկարիչ Տ. Փեշտալճեան 1 բուբլի, Նուխուց՝ տիկին Ս. Ս. 3 բուբլի, Վերին-Ագուլիսից՝ Միքայել Սմբատեանց 5 բուբլի, Երևանից՝ Աղամալ Մելիք-Աղամալեան 10 ր., Հայրապետ և տ. Ովսաննա Յովհաննիսեանցներ 25 ր., Կարապետ Աֆրիկեան 5 ր., Արտ. Թադէոսեան 3 ր., անայայտ 1 ր. Կարսից՝ մի քանի երիտասարդներ 5 բուբլի, Վարշավայից՝ Ռոստոմեան, Գ. Միդիվանեան, ոմն, Իզմիրեան, Ղամբարեան, Յ. Երեցիխանեան, տ. Սարրա Զուրաբեան, Ղ. Թումաս, բոլորը միասին 80 բուբլի։ Ընդամենը 151 բուբլի, իսկ նախկին 215 ր. 22 կ. գումարի հետ ունենք 366 բուբլի 22 կոպէկ։

—

Սկսելով «Մշակի» այսօրվայ համարից «Կենդանագիրների» տպագրելը, պարտաւորութիւն ենք համարում յայտնել, որ Մկրտիչ Խրիմեանի կենդանագրից յետոյ մենք յաջորդաբար կը տպագրենք Արիստակէս Սեդրակեանի, Երեմիա Գալատեանի, Գրիգորիս Ալէքթճեանի և մի քանի ուրիշ եպիսկոպոսների կենդանագիրներ։

—

«Кавказъ» լրագրում տպված է հետևեալ հեռագիրը Էջմիածնից, փետրվարի 23-ից. «Նոր ստացած «Кавказъ» լրագրում տպված է սխալ տեղեկութիւն։ Էջմիածնի սինօդը երբէք թոյլատրած չէ չարաբաղդ կամուրջ շինող տէր-Կոնստանտին Արարատեանին կրկին ստանձնել քահանայագործութիւնը։ Քննիչ յանձնաժողովի պահանջմամբ հեռացրած էին իրանց պաշտօններից՝ Խարազեան, Գալստեան և Արարատեան քահանաները մինչև քննութեան և դատավարութեան վերջանալը։ Զարմացմամբ իմացանք, որ թեմական առաջնորդի անձնական կարգադրութեամբ բոլոր երեք քահանաներն էլ հրաւիրվեցան նորից ստանձնել իրանց նախկին պաշտօնները։» Հեռագիրը ստորագրել է քննիչ յանձնաժողովի նախագահ, Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան։

—

Նոյն «Кавказъ» լրագրում տպված է և հետևեալ հեռագիրը Էջմիածնից, փետրվարի 23-ից. «Հաղորդում եմ հաստատ աղբիւրներից, որ այսօրվայ ընտրութիւնները Հալաթարի եկեղեցիներում կատարվում են հակառակ սինօդի կարգադրութեան։» Հեռագիրը ստորագրել է Սաղաթելեան։

—

Նուխեցի տիկին Ս. Ս-ի նուիրած «Մշակի» մի տարեկան համարը մենք կուղարկենք Մոսկվա[illegible] դեղագործական բաժնի ուսանողներին։

—

Մեզ գրում են ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ, որ այստե[illegible] ամբողջ Կուբանի շրջանի հայերն էլ պատգամ[illegible]որ ընտրեցին պ. Յովսէփ Աշրափեանին։ Տեղ[illegible] ժողովրդի ջերմ ցանկութիւնն է տեսնել Էջմիա[illegible]նի գահի վրա Արիստակէս եպիսկոպոս Սեդ[illegible] կեանցին, որի կենսագրութիւնը պատգամաւ[illegible] ընտրութեան գիշերն և եթ կարդացվեց հասա[illegible] կութեան առաջ։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են, որ կիրակ[illegible] 23-ին փետրվարի ընտրվել են Քութայիսում [illegible]ճակային պատգամաւորներ, որոնք մարտի 8-[illegible] պիտի գան Թիֆլիս, թեմական պատգամա[illegible] ընտրելու համար, հետևեալ երկու անձինք՝ պ[illegible] Յովսէփ Մուրատեանց և Արշակ Ծատուրեանց։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են, որ այդտեղ վի[illegible] կային պատգամաւորներ ընտրվել են պ.պ. Ն[illegible]սէս Տէր-Ներսիսեանց և բժիշկ Թէյմուրեանց։

—

Մեզ գրում են ԲԱԹՈՒՄԻՑ. «Հայոց Բարեգ[illegible]ծական ընկերութեան տեղիս ճիւղի վարչութի[illegible]նը իր վերջին նիստում վճռեց, առաջարկութեա[illegible] փոխնախագահ պ. Խարազեանցի, կառուցան[illegible] իր ծախսով երկսեռ ուսումնարանի շինութիւն[illegible] քաղաքից ընծայված հողի վրա և հարկա[illegible] միջոցները ձեռք առնել, որ կարողանայ այս տ[illegible]ի շինութիւնը վերջացնել։ Մինչև օրս ուսու[illegible]նարանի տան վարձ վճարում ենք տարեկան ո[illegible] հարիւր բուբլի։»

—

Լսում ենք, որ Սուխումի վիճակի կողմ[illegible] պատգամաւորներ են ընտրվել պ.պ. Կարապե[illegible] Կամսարական և Գէորգ Մուրատեան։

—

Թիֆլիսի Քաղաքային Թատրոնում, մարտի 2-[illegible] կայանալու է մի կոնցէրտ, զրական բաժնով[illegible] Մասնակցում են տեղական լաւ ոյժերից շատերը[illegible]

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԷՆԻ-ԳԱԲՈՒԻ ՀՐԴԵՀԸ

—

Փետրվարի 13-ին կ. Պոլսի Եէնի-Գաբու թա[illegible]ղում հրդեհ պատահեց, որի մասին հետևեալ տեղ[illegible] կութիւններ են հաղորդում այնտեղի լրագիրները[illegible]

«Երէկ, առաւօտեան դէմ, սոսկալի հրդեհ մ[illegible] մոխիր դարձուց Եէնի-Գաբուի հայաշատ թաղի[illegible] երեք չորրորդը։

Հրդեհը սկսաւ ժամը 10-ին, Օրթա Սօքաք փ[illegible]ղցէն, նպարավաճառի մը խանութէն։ Թէպէտ[illegible]հով չէր փչեր այդ միջոցին, սակայն այդ կողմ[illegible] փայտաշէն տուներն այնքան հոծ ու խիտ են ո[illegible] շուտով ծաւալեցաւ, մէկ կողմէն դէպի Սանտ[illegible] Պուրնու և միւս կողմէն դէպի ծովեզերեայ տու[illegible]ները։ Քիչ յետոյ հիւսիսային ուժգին հով մ[illegible] եկելով, աւելցուց աղէտքին սաստկութիւնը։ Փայ[illegible]

տաչէն տունները, ժողովրդական նկարագիր բա-
ցատրութեան համեմատ, լուցկիի պէս կը վառէին
և մոխիր կը դառնային: Հրդեհին առաջին լուրն
առնելուն պէս վազած եկած էին քաղաքապետ
Բրտվան փաշա, ոստիկանութեան նախարար Նա-
զըմ պէյ, սպարապետ Բիզա փաշա և կառավա-
րական ուրիշ բարձրաստիճան պաշտօնեայներ:
Զուրի պակասութեան պատճառով, կարելի չե-
ղաւ շուտով հրդեհին առաջքն առնուլ: Սպարա-
պետութեան ջրանկիր զինուորներն և Թէրանէի
նոր հրէջ գործին, Մէհմէտ փաշայի առաջնորդու-
թեան ներքև, մեծ օգուտ ունեցան:

Այրած տուներուն թիւը, պաշտօնական ճիշդ
տեղեկութեանց համեմատ, 150-էն աւելի է: Գրե-
թէ բոլորն ալ աղքատ ընտանիքներու տուներ
էին: Ուստի դիւրին է երևակայել թէ Եէնի-Գաբու
արցունքի, լացի, կոծի և թշուառութեան ինչ
կսկծալի հանդիսարան մը կը ներկայացնէր: Աղէտ-
քին աղդած դառնութիւնը կաւելցնէ սա պա-
րադայն ալ թէ երեք հոգի, չը կրնալով ժամանա-
կին աղատիլ, այրած են բոցերուն մէջ, կին մը
որ դեռ առջի օրն իսկ ծննդաբերութիւն ունե-
ցած էր, մանկամարդ աղջիկ մը որ փլչող դրան
մը տակ մնացած է և պառաւ կին մը որ եկե-
ղեցիին վերնատան մոմարարն էր:

Տուներէն շատ քիչերը ապահովագրուած էին:

Քաղաքապետ Բրտվան փաշա մեծ ճիգ թափեց:
Ոստիկանութեան նախարար Նազըմ պէյ կարգա-
պահութեան վերին հսկողութիւնը կընէր անձ-
նուէր եռանդով: Հրդեհը վերջ դտաւ ժամը 4-ին:
Յովհաննիսեան տունները զերծ մնացին աղէտքէն:
Կարելի է ըսել թէ գիւղին չրջանակը կազմող
բոլոր տունները ազատեցան, կեդրոնական մասն
ամբողջ հրոյ ճարակ ըլլալով: Ս. Թադէոս և Բար-
թողիմէոս եկեղեցին մեծ ջանքերով ազատեցաւ.
իսկ աղջկանց Հայկանոյշեան վարժարանը մոխիր
դարձաւ:

Ս. Պատրիարք Հայրը ժամը 5-ին միջոցներն
հրդեհին վայրն երթալով, մխիթարական խօսքեր
ուղղեց հրկիզեալներուն և փութաց հարկ եղած
կարգադրութիւններն ընել: Վեհ. սուլթանն իր
հայրախնամ հոգածութեամբ հրամայած է որ
հրկիզեալներուն նպաստ տրուի: Երէկ առաւօտ
հաց, միս և ածուխ բաշխուեցաւ: Պատրիարքա-
բանի կողմէ պաշտօնական ծանուցում մը ղրր-
կուեցաւ Եէնի-Գաբուի չրջակայ թաղ. խորհուրդ-
ներուն որպէս զի իմացնեն հրկիզեալներուն թէ
վաղը և կիրակի ներկայանալով Եէնի-Գաբուի
թաղական խորհրդարանը, արձանագրել տան ի-
րենց անունները, ըստ այնմ մասնակից ըլլալու
համար վեհ. սուլթանին չնորհած նպաստին: Մի-
անգամայն, Գում-Գաբուի և Եէնի-Գաբուի գլխա-
ւոր աղգայիններէ մասնախումբ մը կազմուեցաւ
կայսերական նպաստին բաշխման կարգադրու-
թիւններն ընելու համար:»

ԲԵՐԼԻՆԻ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

«Daily News» լրագրին Բերլինից հեռագրում
են փետրվարի 14-ից (26-ին) հետևեալը. «Մա-
սամբ այսօր ևս չարունակվող երէկվայ անկար-
գութիւններին չատ մեծ նշանակութիւն չը պէտք
է տալ: Թէպէտ և երէկ թվում էր, որ այդ ան-
կարգութիւնները մի նախամտածած ծրագրի հե-
տևանք էին, և սոցիալ-դեմոկրատների գլխին ա-
մէն կողմից մեղադրանքներ էին թափում,—սա-
կայն ոչ ոք այնքան դժգոհ չէ այդ անկարգու-
թիւններից, որպէս այդ կուսակցութեան առաջ-
նորդները: Մի բան միայն անկասկած է, որ թէ
այստեղ, և թէ եւրոպական ուրիշ մայրաքաղաք-
ներում մեծ աղբատութիւն է տիրում: Առևտու-
րը և արդիւնաբերութիւնն ընկնում են, իսկ վեր-
ջին ամիսներ գործադուլները յարմար առիթ ե-
ղան գործարանատէրերի համար՝ կրճատել ար-
դիւնաբերութիւնը: Սակայն նոյն այդ ժամանակ,
երբ քաղաքները լցված են պարապմունք չունե-
ցող մարդկանցով, գիւղերը երկրագործ բանւոր-
ների պակասութիւն են զգում. մինչև անգամ ա-
զատամիտ լրագիրներն այսօր խորհուրդ են տա-
լիս Բերլինի իշխանութիւններին խստապէս գործ
դնել այն օրէնքը, որով իւրաքանչիւր անձ, որը
ապրելու միջոցներ չունի, պէտք է հայրենիք ու-
ղարկվի:»

«Berliner Tageblatt» լրագիրը Բերլինի ան-
կարգութիւնների առաջին օրը խանութներին
հասցրած վնասը մօտաւորապէս 20,000 մարկ է
գնահատում: Այդ գումարը 1850 թվի մարտի
11-ի օրէնքի համաձայն պէտք է վճարեն քաղա-
քային համայնքները: Վերոյիշեալ լրագիրը տպել
է բանւորների ձեռքով կողոպտված մագազինե-
րի ցուցակը: Բանւորները սկսեցին կողոպտել
հացավաճառների խանութները: Ամբոխը կոտ-
րեց հացավաճառների դռների պատուհանները
և ներս մտաւ «մենք քաղցած ենք» աղաղակնե-
րով:»

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Թէհրանից «Тифлисскій Листокъ» լրագրին փե-
տրվարի 23-ից հեռագրում են հետևեալը. «Այստեղ
լուր տարածվեց, որ Ադրբէյջանում չաբան ամս-
վայ 5-ին փոքր եղաւ պարսից թագաժառանգ և
Ադրբէյջանի փոխարքայ պրինց Մուզաֆէր-Էդդին-
միրզայի կեանքի դէմ: Չարագործին աջողվեց
փախչել: Ատրճանակի գնտակը, բարեբաղդաբար,
իշխանի մօտով անցաւ:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնների հա-
մեմատ, այնտեղ կալանաւորել են Գրուի Շինդա-
բովին, որը կասկածվում է Վուլկովիչի սպանու-
թեան մէջ:

—Բերլինից հեռագրում են, որ չուտով Գեր-
մանիայում կը սկսվեն նաւահանգստային աշխա-
տանքներ, ուր գործ կը գտնեն բազմաթիւ ան-
գործ բանւորներ:

—«Temps» լրագրին Բերլինից հեռագրում են,
որ այնտեղից այժմ չատ է դժուարացել հեռա-
գիրներ ուղարկել: Ցէնդուրան բռնում է հեռա-
գիրների մեծ մասը: Անկարգութիւնները ամբողջ
գիշեր չարունակվում էին: Ոստիկանութիւնը չէր
կարողանում վերջ դնել անկարգութիւններին: Ա-
սում են, որ Բերլինում պաշարման դրութիւն իր
հրատարակվի:

—«Pol. Corr.» լրագրին Կ. Պոլսից հաղորդում
են, որ սրբազան սինոդի անդամներ նշանակելու
առիթով Բ. Դրան և տիեզերական պատրիարքի
մէջ եղած ընդհարումը բարեյաջող կերպով է
կարգադրված: Երևում է, որ սուլթանը, ցանկա-
նալով խուսափել ամեն տեսակ ներքին երկպա-
ռակութիւններից, ընդունեց իրան տրված խոր-
հուրդը: Նորերս սուլթանն ունկնդրութեան ընդու-
նեց Նէօֆիտ VIII պատրիարքին, և չնորհեց
նրան մի թանգագին քթախոտի տուփ: Մի քանի
օրից յետոյ սուլթանը իր ադիւտանտի ձեռքով
մի բարձր չքանչան ուղարկեց նրան:

—Պարիզի լրագիրները հաղորդում են, որ չու-
տով ներումն կը ստանան Բոչֆոր և Դիլլոն:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 փետրվարի: «Нов. Время»
լրագիրը հաղորդում է, որ գեներալ Աննէնկովի
ղեկավարութեամբ կը կատարվեն և մասամբ ար-
դէն կատարվում են հետևեալ աշխատանքները.
մօտ 25,000 դեսիատին անտառի կտրելը Նիժէ-
գորոդեան, Օրլովի, Կազանի և Տուլայի նահան-
գներում, քարերի մշակումը Եկիբէմսկի և Բոգո-
լուդիցկի դաւառներում, տնայնագործական ա-
ռարկաներ վուշից Եպիֆանովսկի դաւառում,
նաւահանգստի կառուցումը Սամարայում, ճանա-
պարհների կառուցումը Տամբովի նահանգում,
երեք էլէվատորների կառուցումը Տամբովում,
Մոշչանսկում և Բորիսագլէբսկում, դպրոցների
կառուցումը դանազան տեղերում: Ապա մտադրու-
թիւն կայ մեծ քանակութեամբ եկեղեցիներ, դպրոց-
ներ և տնակներ կառուցանել բանւորների համար
արտասահմանի ձևով:—«Бирж. Вѣд.» լրագիրը
հաղորդում է, որ հացային հարցի վերաբերմամբ
զեկուցում է ներկայացված՝ Քուիբայիսի նահան-
գից 1½ միլիոն բուբլու սիմինդր արտահանելու
թոյլատուութեան մասին, բայց համաձայնութիւն չէ
կայացրած:

ՄՈՍԿՎԱ, 24 փետրվարի: Մեծ Իշխան Սերգիյ
Ալէքսանդրովիչ իր ամուսնու հետ ճանապարհ է
ընկնում Դարմշտատ, ուր վտանգաւոր կերպով
հիւանդացաւ Նորին Բարձրութիւն Հէսսէնի մեծ
դուքսի անները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Բարձրագոյն
ուկազով թոյլ է տրված Քուիբայիսի նահանգի սի-
մինդրի աղատ արտահանումն: Այդ թոյլատուու-
թիւնը չէ վերաբերվում այնպիսի սիմինդրին, որը
կարող է կաքօտաժով բերվել սեծովեան ուրիշ
նաւահանգիստներից կամ բերվել Անդրկովկա-
սեան երկաթուղու կայարաններից Քուիբայիսի
նահանգի սահմաններից դուրս:—Հրատարակված
են. 1) պատիժների փոփոխութիւնները յանցաւոր
գործողութիւնների կրկնութեան ժամանակ և 2)
որսի մասին կանոնները:

ՊԵՏՐՕՊԱՎԼՕՎՍԿ, 25 փետրվարի: Գարնանը
անապատների խորքն է գնում մի արշաւանք, ո-
րը նպատակ ունի քարածուխ գտնել Սիբիրի եր-
կաթուղու համար:

ՄՈՍԿՎԱ, 25 փետրվարի: Այստեղ հիմնվում է
մի կոմիսիոներութիւն ռուսական տնայնագործա-
կան արդիւնքների առևտրի համար և տնայնա-
գործների ու գնողների մէջ միջնորդութիւն ա-
նելու նպատակով: Հիմնական դրամագլուխն է
12,000 բուբլի:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Փետրվարի 25-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	98 ր.	— կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	48 ր.	7½ »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	38 »	90 »
Ոսկի — — արժէ . .	7 »	85 »
Մաքսային կուպօններ — . .	157 »	— »
Արծաթ — — — . .	1 »	16 »
Բօրսային դիսկօնտներ — . .	4¼ »	5½ »
Պետ. բանկի 5% տոմս 1 չրջանի . .	103 »	— »
— — — — 2-րդ — . .	102 »	75 »
— — — — 3-րդ —	— »	— »
— — — — 4-րդ —	— »	— »
— — — — 5-րդ —	— »	— »
— — — — 6-րդ —	102 »	50 »
6% ոսկեայ բէնտա	160 »	50 »
4% ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին չրջ.	— »	— »
— — — 2-րդ —	102 »	— »
— — — 3-րդ —	102 »	12 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	235 »	50 »
— — երկրորդ —	226 »	50 »
Պետական. երկաթուղային բէնտա.	104 »	50 »
5½ բէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	94 »	12 »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101 »	75 »
Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. — — .	198 »	25 »
5½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	103 »	75 »
4½% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	149 »	50 »
— — — թղթադ. .	101 »	50 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	101 »	37 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100 »	75 »
Օդէսայի — — .	101 »	50 »
Թիֆլիսի — — .	99 »	25 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	102 »	50 »
— — Քուիբայիսի — .	102 »	50 »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է:

ՏԵՂԵԿԱՑՈՒՑԷ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ճանապարհորդական գնացքներ Թիֆլիսի և Բաթումի մէջ.

№ 1

ԲԱԹՈՒՄԻՑ *մեկնում է* . . . . 9 ժ. 45 ր. *առաւ.*
ԹԻՖԼԻՍ *հասնում է* . . . . . 9 » 52 » *երեկ.*

№ 2

ԹԻՖԼԻՍԻՑ *մեկնում է* . . . . 9 ժ. 30 ր. *առաւ.*
ԲԱԹՈՒՄ *հասնում է* . . . . 9 » 45 » *երեկ.*

Պոստային գնացքներ Բաթումի և Բագուի մէջ.

№ 3

ԲԱԹՈՒՄԻՑ *մեկնում է* . . . . 11 ժ. 25 ր. *երեկ.*
ԹԻՖԼԻՍ *հասնում է* . . . . . 12 » 25 » *ցերեկ.*
ԹԻՖԼԻՍԻՑ *մեկնում է* . . . . 1 » 20 » *ցերեկ.*
ԲԱԴՈՒ *հասնում է* . . . . . 7 » 30 » *առաւ.*

---

*սիրում են հայոց աղգը, բայց մանաւանդ սիրում
են Հայաստանը...*

*Այո, նա ինքն այնքան սիրում է Հայաստանը,
որ հաւասարապէս սիրում է և այն բոլոր աղգե-
րին, որոնք ապրում են Հայաստանում: Եթէ
նրանք հայ չեն, սակայն անտարակոյս հայաս-
տանցի են... Թիւրքաց Հայաստանի սովի ժամա-
նակ մենք նրան Վանի մէջ տեսնում ենք հա-
ւասարապէս հոգալիս և հայ և քիւրդ և թիւրք
սովեալների մասին, հաւասարապէս նրանց օգտին
հանգանակած դրամներն ու առնված ալիւրը
բաժանելիս... Չէ՞ որ նրանք ամենքը հայաստանցիք
են...*

*Եւ կարծում էք, որ միայն հայն է, որ Խրի-
մեանին հայրիկ է անուանում. ոչ, վասպուրա-
կանցի թիւրքն էլ, քիւրդն էլ՝ Խրիմեանին հայ-
ր ի կ անունով են ճանաչում:*

*Հաւատալ խօսքի ոյժին, հաւատալ մտքի ան-
յաղթելի ազդեցութեանը, հաւատալ ճշմարտու-
թեան, արդարութեան, քրիստոնէական դաղափա-
րի վերջնական յաղթութեանը,—ահա Մկրտիչ
Խրիմեանի նշանաբանը, նրա հաւատի դաւանան-
քը: Եւ այդ համոզմունքով, հաւատի այդ դաւա-
նանքով, Ներսէս Վարժապետեանի պատուէրը
կատարելով, լի յոյսերով ուղևորվում է նա Բեր-
լին, միջազգային կոնդրէսին ներկայանալու:*

—

*Խրիմեան թողնելով Կ. Պոլիս, ուղևորվում է
Եւրոպա, որպէս պատրիարքական պատուիրակ:
Նա ու ղևորվում է Եւրոպա՝ իր սրտի մէջ կրե-
լով մի մեծ և սրբազան խորհուրդ:*

*Ծաղկած երկիրներ, չէն քաղաքներ, աղգաքնա-
կութեան անդորրութիւն, խաղաղութիւն, մարդ-
կանց ապահով, հանգիստ, երջանիկ կեանք,—այդ
բոլորը երևում է նրան որպէս արդիւնք քրիս-
տոնէական քաղաքակրթութեան:*

*Բնութեան գաւակ, բուն քրիստոնէական հո-
վիւ, նա հրճվում է, երբ նայում է իր չորս կող-
մը....*

*Հիմա նրա միտքը թռչում է հեռու, շատ հե-
ռու, դէպի Թիւրքիայի խորքերը. նա ակամայ համե-
մատում է քաղաքակրթութեան ամեն բարիքները
վայելող եւրոպացի քրիստոնեայի վիճակը, այդ
նոյն բարիքներից զուրկ Թիւրքիայի քրիստոնեայ
հնադարեան ժողովրդի, հայի վիճակի հետ:*

*«Եւրոպական ծաղկած քաղաքակրթութիւնը,—
ահա քրիստոնէական դաղափարի մարմնացած
յաղթանակը», մտածում է նա:*

*Եւ մթէ քաղաքակիրթ, քրիստոնէական Եւրո-
պան, որտեղ թէ արքունիքներում, թէ մինիստ-
րական առանձնասենեակներում իրան այդքան
սիրալիր կերպով են ընդունում, այդքան կարեկ-
ցութիւն ու ցաւակցութիւն են յայտնում դէպի իր
դատը, այդ քաղաքակիրթ, քրիստոնեայ, մարդա-
սէր Եւրոպան՝ կարեկցութեան և օգնութեան
ձեռք չի կարկառի ասիական քրիստոնեայ ամենա-
հին ազգերից մինին, նրա վիճակը թեթևացնելու,
նրա դատը արդարութեամբ վճռելու համար....*

—

*Սակայն ինչ է Խրիմեանի դատը: Բերլին հաս-
նելով ու իր դրաւոր խնդիրքը, իր յիշատակագի-
րը միջազգային աւագժողովին ներկայացնելով,
նա չունի աչքի առջև որ և է քաղաքական նպա-
տակներ. նրա տենչանքն է՝ քրիստոնէական դա-
ղափարի, արդարութեան յաղթանակը, քրիս-
տոնեայ հնադարեան ժողովրդի, հայի անդորր,
ապահով կեանքը: Նա մի բան է խնդրում միայն,
—այդ այն է, որ Թիւրքիայի հայը կարողանայ
մարդավայել կերպով ապրել, կարողանայ քաղա-
քակրթական կեանքի ամենատարրական պայման-
ները՝ անձնական կեանքի, իր ընտանիքի պատվի
և իր կայքի ապահովութիւնը ձեռք բերել:*

*Եւ երբ Բերլինի հիւրանոցի սենեակում իրան
շրջապատող բարեկամները թերահաւատութեամբ
գլուխ են շարժում ու ժպտալով ուսեր են բարձ-
րացնում, առարկելով թէ քաղաքակիրթ Եւրոպան
ունի իր քաղաքական շահերը, որոնք ոչինչ կապ
չունեն մարդասիրական զգացմունքի հետ, ոչինչ
կախում չունեն քրիստոնէական լայն, համբերող՝
մարդասիրական ոգուց,—Խրիմեան, իրան յատուկ
վառ, գրեթէ երիտասարդական համոզմունքով
պատասխանում է. «չեմ հաւատում....»*

*Վերջանում է աւագժողովը: Խրիմեանի յոյսե-
րը իր ցանկացածին չափ չեն իրականանում,—և
դիմելով իր բարեկամներից մինին, նա հարցնում
է նրան. «Ասա ինձ, բարեկամ, ե՞րբ կը լինի այն
երանելի ժամանակը, որ քաղաքակիրթ և քրիս-
տոնէական Եւրոպան վերջապէս կը ներշնչվի
մարդասիրական, բուն քրիստոնէական ոգով....»*

—

*Անցաւ շատ ժամանակ: Մկրտիչ Խրիմեան
եօթանասուն և երկու տարեկան է այժմ: Ար-
դեօք նա հիասթափվեց, վհատվեց.... Չեմ կար-
ծում.... Գուցէ նա մասամբ հիասթափվեց, բայց
չեմ կարծում որ վհատվեր, այն աստիճան խոր
արմատներ է գցել նրա զգայուն սրտում հաւատը
դէպի մարդկային արդարութիւնը, դէպի քրիստո-
նէական դաղափարի յաղթանակը:*

*Որպէս իդէալիստ՝ նրա հաւատը անսպառելի
է. որպէս բուն քրիստոնէական հովիւ,—նրա
պարտաճանաչութեան զգացմունքը իր հոգևոր
զաւակների վերաբերմամբ, նրա հոգացողութիւնը
իր հոգևոր հօտի մասին՝ անսահման է....*

Գ. Ա.

№ 4

ԲԱԳՈՒԻՑ մեկնում է . . . . 11 ժ. 10 ր. գիշեր
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . 5 » 50 » երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . 6 » 50 » երեկ.
ԲԱԹՈՒՄ հասնում է . . . . 8 » 15 » առաւ.

Խառն գնացքներ Թիֆլիսի և Գանձակի մէջ

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . 9 ժ. 20 ր. երեկ.
ԳԱՆՁԱԿ հասնում է . . . . 10 » 10 » առաւ.
ԳԱՆՁԱԿԻՑ մեկնում է . . . 7 » 35 » երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . 7 » 30 » առաւ.

—

ՌՈՒՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈԳԵՆԱՒԵՐ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 4 ժամին երեկոյեան, շրջական ընթացով, Բաթումից դէպի Օդեսա.

ՇԱԲԱԹ, 8 ժամին երեկոյեան նմանապէս։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 ժամին երեկոյեան, Բաթումից դէպի Կ. Պոլիս։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՈՖԷՍԻՈՆԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) Հանդերձների և սպիտակեղէնի ձեւի դասեր Գլօդզինսկու մեթոդով և Շեդզերի ֆրանսիական մեթոդով։

2) Կարի դասեր մոդային ժուրնալներով։

3) Հարթակարի և զանազան ձեռագործերի դասեր։

4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար։

Վճարը ամսական 2 ռուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյեան։

Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձրի։ (№ 23) 1—40

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով տեղեկացնում է ընդհանուր գիտութեանը, որ այս 1892 թվի մարտի 3-ին, իր դրասենեակում, ցերեկվայ 12 ժամին կը կայանայ աճուրդ՝ կապալով տալու քաղաքային հողի մի կտորը 213 ք. սաժէն տարածութեամբ, փայտեր դարսելու համար, Մաքսատան դիմաց, 10-դ քաղաքամասում, որը այժմ կապալով ունի վերցրած Վասիլի Բիլսկի։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ վարչութեան դրասենեակում, բացի տօն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամը։ 1—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, մարտի 2-ին, լինելու է

ԿՕՆՑԷՐՏ

Մանրամասնութիւնները առանձին աֆիշներով։ 1—1

Մի Օտարաքաղաքացի **ՏԻԿԻՆ** կամենում է պարապմունք ունենալ մի որ և է խմբագրատան կամ դրասենեակում, կամ վերջապէս մի որ և է առևտրական հիմնարկութեան մէջ։ Դիտէ հաշուապահութիւն։ Դիմել „ՄՇԱԿԻ“ խմբագրութեանը։
№ 22. 2—5

ՏՐՎՈՒՄ է վարձով 7 սենեակից բաղկացած մի **ԲՆԱԿԱՐԱՆ**, բոլոր յարմարութիւններով.
(№ 18) БАРОНСКАЯ УЛИЦА, домъ № 15. 4—5

ԾԱԽՎՈՒՄ Է գեռնի մի բաժին 306 քառակուսի սաժէն տարածութեամբ, ՆԱԲԵՐԷԺՆԱՅՈՒՄ, Թիֆլիսում, պահեստի դեղատան դիմաց, որտեղ կանգնած է նաւակը, երկրորդ անցքի մօտ։

ՀԱՍՑԷՆ. նոյն տեղում, Նաբերէժնայա փողոցում, դիմել Դավիդովին։
(№ 18) 5—5

(№ 19) Գ. Գ. **ԼԱՐՇԵԻ** ՍԵՐՄԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ
Միխայլովսկի կամուրջի վրա, մագազին № 174, **ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ԹԱՐՄ ՍԵՐՄԵՐ** ԲԱՆԶԱՐԵՂԷՆՆԵՐԻ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐԻ։
Պրէյսկուրանտները ուղարկվում են ձրիապէս։ 5—25

ПАРФЮМЕРІЯ
ВИКТОРІЯ — РЕГИНА.
мыло олео-вазелиновое
РОЯЛЬ — КОНГО.
духи высшаго достоинства
ИМПЕРОРОНАКСЪ — ФІАЛКЪ И ВІОЛЕТЪ.
О-ДЕ-КОЛОНЪ РОЯЛЬ
О-ДЕ-КОЛОНЪ ЦВѢТОЧНЫЙ
РАЗНЫХЪ — ЗАХАРОВЪ.
Въ Высочайше утвержденномъ Кавказскомъ Товариществѣ торговли аптекарскими товарами въ Тифлисѣ и Баку.
(91—№ 57)

ՊԱՐՖԻՄԵՐԻ
ՎԻԿՏՈՐԻԱ-ՐԷԳԻՆԱ
օլէո-վազելինեան սապոն
ՐՕՅԱԼ-ԿՈՆԳՕ
մանուշակ
ԻԿՍՊՐՈՄՊՏ ԵՒ ՎԻՕԼԷՏ
ԱՆՈՒՇԱՀՈՒՄԵՐ
ՕԴԵԿՕԼՈՆ ՐՕՅԱԼ
օդեկոլոն ծաղիկների
ԶԱՆԱԶԱՆ — ՀՈՏԵՐԻ
դեղագործական ապրանքների բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութեան վաճառանոցում թիֆլիսում և բաղումում։
40—50 (5)

ԱՌԱՋԻՆ ՁԻԹԱՀԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Յ. ԹԱՅԻՐՈՎԻ ԵՒ Կ. ԱԼԻԽԱՆՈՎԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Մեծ պասի համար գործարանում կայ մեծ քանակութեամբ ծախելու համար հետևեալ տեսակների **ՁԷԹ**. 1) ԿԵՐԱԿՐԻ՝ քունջութի, կանեփի, կտաւատի. 2) ԱՑՐԵԼՈ 3) ԵՓԱՆ՝ ներկելու համար, այլ և կովեր և եղներ կերակրելու համար։ Քունջութի ձէթը մաս մաս ծախվում է՝ մեկ և երկու ֆունտանոց ամաններում հետևեալ խանութներում. 1) Դեղատան ապրանքների կովկասեան ընկերութեան վաճառատանը. 2) Զօվանի խանութում, Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Դոբրժանսկու Վօրոնցովի արձանի մօտ. 3) Ալիխանովի խանութում, Գոլովինսկի պրոսպեկտ տուն Դոբրժանսկու. 4) Միրզախանովի խանութում, Պուշկինսկայա փողոց. 5) Բեժանովի խանութում, Միքայէլեան փողոց. 6) Բագարովի խանութում, Նիկոլաևսկայա փողոց, սեփական տուն. 7) Վարվարովի խանութում, Գոլովինսկի պրոսպեկտ տուն Օրբելիանիի. 8) Սարաջևի խանութում, Գոլովինսկի պրոսպեկտ տուն Բարանաևովի։

Բոլոր տեսակ ձէթերի մաս մաս վաճառումը սեփական վաճառատներում. 1) Սադոսկի բազար, տուն Բուղդանովի, մնավաճառների մօտ. 2) Թուրքաց Մեդան, քաղաքային բուտկայում. 3) Օլգինսկայա փողոց, տուն Մերուրնութովի, Բաթումի պահեստի կողքին և 4) Հաւլաբարի հրապարակ, քաղաքային բուտկա № 1։

Պահեստը և դրասենեակը գտնվում են Երևանեան շօսսէյի վրա, սեփական տան։
(№ 18) 4—14 (Ե. շ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) սիֆիլիսի և աչքաց
Դ. Գ. ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Մ. Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—12—12½ ժ. կանանց ց. և մանկաբարձութեան։
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12½—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Բ. ԱԼԵԿՍԷՅԵՎ—5—6 ժ. նեարդային ց. և էլեկտրաբուժութեան։
Ա. Մ. ՓՈՒԼԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքինց.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար առանձին։
11—52 (5) Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 25 դեկտեմբերից (6 յունվար.) սկսած և փոխադարձ

Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզօն, Սամսօն, և Կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 19 փետրվարի (2 մարտի) շոգենաւ ԱՐՄԷՆԻԱ նաւապետ ՏԻԲԱԼ
— 4/16 — — ԱՆԱՏՕԼԻԱ — ԳԱԲՐԻԳ
— 18/30 — — ՄԻՆԳՐԷԼԻԱ — ԲՈՒԼԴՈՒ
— 1/13 ապրիլի — ԱՐՄԷՆԻԱ — ՏԻԲԱԼ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ։ Տօմսակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գներով պակսեցրած են։

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիօնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, նախկին գեներալ Տէր-Ասատուրովի տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլդարովին, կոլիբիակինսկայա հրապարակ, և ՆՈՎՈՐՈՍԻՍԿՈՒՄ պ. Լուի Բրնօին։ (№ 124) 6—10 (Ե. շ.)

ВЪ ПОЛЬЗУ ПОСТРАДАВШИХЪ ОТЪ НЕУРОЖАЯ

поступила въ продажу новая книга

„ИЗЪ ЭПОХИ ВЕЛИКИХЪ РЕФОРМЪ“

(Освобожденіе крестьянъ.—Отмѣна тѣлеснаго наказанія.—Цензурная реформа.—Новый судъ и пр.).

Историческія справки.

ГР. ДЖАНШІЕВА.

Цѣна 1 рубль. съ пересылкою 1 руб. 18 коп.

Складъ въ конторѣ *Русскихъ Вѣдомостей.*

Весь валовой доходъ отъ продажи полностію поступаетъ въ пользу голодающихъ.

(№ 19) 3—3 (2. Ե.)

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10,000 ռուբ. համար. 1%-ից մինչև 12%։ Վաճառվում է եղբարց Յովհաննէսների բանկային դրասենեակում և հեղինակի մօտ Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.

Գինն է 1 ռուբլի։ Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի։ 74—150
(91—№ 95)

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Февраля 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.